Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Latin
2153

1999

ԱՌԱՔԵԼՈՐԱԿԱՆ

ԱՌԱՔԵԼՈՐԴԻ ՀԱՅՈՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

ԳԷՈՐԳԱՅ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

Ի ԹԷՀՐԱՆ

ԵՐԹՆ ԵՆ ՋԱՍՆ ԽՆԴՐԱԳԻՐՔ ՆՈՐԱ

ԵՒ

ՀՐՈՎԱՐՏԱԿՔ

առ այժմ

ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ ՇԱՀԻՆ ՊԱՐՍԻՑ

ՏՓԽԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՅ ԷՆՃԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ

1866

/459

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ի ԳԱ. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Дозволено цензурою

Тифлисъ. 20-го Ноября 1866 года.

Zp 2158 4-2153.60

ԱՋԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

Հայոց ազգի պատմութեան էջերի մէջ շատ անգամ կհանդիպին մեզ կարդալ նորա անձնադիր հոգևոր հովիւների սխրական գործերը, որոնք ըստ օրինակի ճշմարիտ հովուաց, երբ տեսել են իրանց հօտի կրօնական կամ նիւթական հարստահարութիւնքը, չեն խնայել դնել իրանց անձը իրանց հօտի վրա՝ այլ ամենայն վառնդ և նեղութիւն յանձն առնելով, դիմել են ի գթութիւն կռապաշտ, քրիստոնեայ և մահմէտական թագաւորների և միշտ յաջողութեամբ ստացել են նոցանից զանազան արտօնագրեր յաղաղութիւն կրօնի, և ազգութեան, և յարգահոլութիւն կենաց և կայից։ Այս թանկագին արտօնագրերի հետքերը միայն գտնում ենք պատմութեանց մէջ, իսկ նոցա բնագրերը, կամ թարգմանութիւնները և օրինակները կուլ է տուել ժամանակը, է որ մեր նախնեաց անհոգութենից և է որ ժամանակի հանգամանքներից։

Աստրաստանի առաջնորդ բարձր սրբազան Գէորգ արք. եպիսկոպոսն Վեհապետեան (այժմ տեղակալ Կաթողիկոսի ամենայն Հայոց) տեսնելով իւր վիճակի մէջ պարսից հպատակ Հայոց նեղակրութիւնքը ըստ այլևայլ մասանց, հետևեցաւ նախնի սրբազան հայրց նախանձելի շաւղացը, արհամարեց Աստրաստանից մինչև Թէհրան գնալու ճանապարհի հեռաւորութիւնը և դժուարութիւնը, առ ոչինչ համարեց ծերութիւնը, անձնական տկարութիւնը և այլ խափանարար պատճառները, և ի 1865 ամի դիմեց ի գթութիւն արդակնափայլ Նասրատին Շահին Պարսից, այլևայլ խնդրա-

գործութեամբ յայտնեց Նորին Մեծութեան իւր հօտին եկեղեցւոյն պէտքերը և կարիքը, և ընկալաւ գթած արքայից բաւականացուցիչ հրովարտակներ։

Այս ազգաւէր հովուի ուղևորութիւնը տպուեցաւ անցեալ տարի Թիֆլիզում հրատարակուած Մեղու անուանեալ լրագրի 24 համարումը մուտցմամբ մասնաւոր հանդամանաց, իսկ խնդրագրերը և արքունի հրովարտակների թարգմանութիւնքը տպուեցան նոյն լրագրի 44-ից 951 համարներումը։

Որովհետև մեր ազգի լրագիր կարդացողների մէջ հազիւ կգտանուին անձինք, որ տարեկան լրագիրը հաւաքելով կազմել տան և մի գիրք չինեն ապագայ հարկաւորութեան համար, վասնզոյ հարկաւոր համարեցինք նոյն ուղևորութիւնը (նոյն իսկ ակամաւոս պատմիչի յաւելուածով), Ն. Բ. արքազնութեան խնդրագրերի և պարսից ողորմած Շահի հրովարտակների թարգմանութիւնքը տալ առանձին տետրակի մէջ և թողուլ ի յիշատակ յազգէ յազգ և յորդւոց յորդիս։

Յոյժ ցանկալի էր մեզ նոյն հրովարտակների օրինակը տալ տալ, բայց այստեղի տպարանները կարող չէին ըստ արժանւոյն կատարել մեր սրտի փափաքը, յուսամ, որ նոյնը կատարեն Աստրատականի մեր Հայ եղբարքը տալով տալով նոյն հրովարտակները Թաւրիզում պարսկական վիմագրութեամբ։

ՀԱՅ ՈՄՆ։

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Այն օրից՝ երբ Գէորգ սրբազանը Ատրպատականի Հայոց առաջնորդութեան ծանր պաշտօնն ստանալով հանդուցեալ Տ. Մատթէոս կաթուղիկոսից 1861 թուին, մտաւ Դաւրէժ քաղաքը, ուր և տեսնելով ու լսելով երկրիս բնակիչ Հայոց անտանելի նեղակրութիւնները բռնաւոր տիրապետողներից, մտատանջութեամբ ցաւում էր, և անդադար ջանք անում բանիւ և գործով բարեռքել այն Հայոց թշուառ կեանքի դրութիւնը, և երջանիկ վիճակի հասցնել, յարմարաւոր միջոցներում դրաւոր և բանաւոր խնդիրքներ հասուցանելով Պարսից դիւանատները, որ կարողանար գտնէ փոքր ինչ ապահովել Հայոց դառն վիճակը, թեթեւացնելով նրանց վրայից ծանր տառապանքների լուծը. բայց տեսնելով, որ տեղւոյս դատաւորների տուած հրամանները և վճիռները իսկապէս չեն կատարվում, օր ըստ օրէ փոփոխութիւն ստանալով նոյն իսկ դատաւորներից, և Հայ–քրիստոնեայ ժողովուրդը ինչպէս յառաջ կրում են միշտ նեղութիւններ, և շատերն էս հեռանում են իւրեանց բնակութիւններից, ուստի ամենայն յօժարութեամբ

հոգւոյ Ն. Բ. Սրբազնութիւնն յանձն առաւ ծերու-
թեան հասակի մէջ՝ գնալ հասանել Պարսից արքայա-
նիստ Թէհրան քաղաքը, որ իրեն յանձնուած
Հայոց ցաւոց և նեղութեանց ցուցակը ներկայացնէ
Վ. Նասրադին Շահին, չենայելով անձնական հան-
գստութեան և դրամական ծանր ծախուցը: Ուստի և
անցեալ 1865 թուի, մայիսի 15-ին, փառաւոր հան-
դիսով Ճանապարհորդեց ընիկ և օտարական Հայոց ու-
ղեկցութեամբ երկու ժամաչափ միջոցաւ՝ մինչև „Խա-
լաթ փուշան“ անուանեալ տեղին, ուր քանի ժամ
մնալուց զկնի անջատուեցինք ուղևորող Հայերից. և
ոկսեցինք չափել Ճանապարհի երկայնութիւնը:

Երբ որ մօտեցանք Թէհրան քաղաքին, ահա ընդ
առաջ եկին տեղւոյն Հայոց բազմութիւնք՝ յառաջուց
հեռագրով իմանալով, բերելով Բ. սրբազանի ընդու-
նելութեան հանդէսը շքեղացնելոյ համար „Եղակ“
անուանեալ զարդարած ձիանք, և կառէթներ, որոց
ուղեկցութեամբն մտաւ Թէհրան քաղաքը, և հան-
գստացաւ Հայ—հատարակութիւնից պատրաստած ի-
ջևանումն տեղական մայր եկեղեցւոյ գաւթումն:

Որին Բ. սրբազնութիւնը քանի օր հանգստա-
նալուց զկնի՝ յառաջ այցելութիւն գնաց Ռուսաց կայ-
սերութեան գերազանց Նիկոլայ կարլիչ կիրս դեսպանին
Զարկեանդայ անունով ամարանոցումն, որոյ հետ բա-

ական խօսակցութիւնից զինի վերադարձաւ թէհրան, և ապա քանի օրից յետոյ յիշեալ դեսպանից հրաւիրվեցաւ Շիմիրան գաւառի Վանակայ անունով հայաբնակ ամարանոց գիւղը, ուր նախապատրաստված էր նոյն դեսպանից շքեղազարդ վրաններ, ընդարձակ այգւոյ մէջ, սառն և վճիտ առուակի եզերքին։

Բայց որովհետև թէհրան քաղաքի օդի ու ջրոյ վատութեան պատճառաւ վեհ. Շահը գնացած էր Մազանդարանի կողմերն, որպէս և ամեն միջոցներում. ուստի և Բ. Սրբազանը երկար միջոց մնաց թէհրանումն, և հետզհետէ այցելութիւն գնաց Պարսից մեծամեծներին, յառաջ Պարսից դրան դվալի խարաջ Միրզայ Սէյիտ խան վեզիրին (արտաքին գործոց մինիստր), որոյ առաջնորդութեամբն ներկայացաւ և մեծապատիւ Արքունի ընդհանուր զօրապետ վէզիր սպասալարին՝ մեծ դահլիճում, ուր բազմած էին պարսից հոգևորական և աշխարհական Արքունի դրան պաշտօնատէր մարդիկներն, որոյ քանի հարկաւոր հարցմանցն և քաղցր խօսակցութեանցն յարմարաւոր պատասխանատուութիւնից յետոյ, կրկին վերադարձաւ Վանակ գիւղը, և սպասեց վեհ. Շահի վերադարձին 'ի թէհրան։

Յուլիսի 27-ին հազիւ վերադարձաւ վեհ. Շահը, Շիմիրան գաւառի Նիավէրան գիւղը Արքունի ամա-

բանոցը, և օգոստոսի 4-ին յաւուր չորեքշաբաթի Վ. Շահի բարձրագոյն հաճութիւնը ռուսաց մինիստրի ձեռքովը զրաւոր յայտնվեց Բ. սրբազանին, որ զկնի կէս աւուրն պատրաստ զանուի Գէշիկ.ի—բաշի անուանեալ Արքունի վրանումն. ուստի և համաձայն հրաւիրման Բարձր Սրբազանն գնաց դէպ ի յիշեալ վրանն—և երբ Բ. սրբազանն մօտեցաւ վրանին, Արքունի պահապան զօրքը, որ շրջապատած էին վրանումն, իսկոյն իրենց սովորութեանը համաձայն շարժեցրին հրացաններն, ուր կէս ժամաչափ մնալով, առաջնորդութեամբ դվալի խարաջի, և էշիկ աղասի բաշինի, գնաց յԱրքունի պալատը, որոնք իրենց ձևին համաձայն հագնված էին կարմիր զգեստներ:

Պալատի երկրորդ կարգի վերնատանը մեծ ու փառաւոր շքեղաշուք ոսկեայ աթոռի վրայ բազմած էր վեհ. Շահը, ուր և Բ. սրբազանն առաջնորդութեամբ յիշեալ ատիճանաւորաց ներկայացաւ նրան, և նորա հրաւիրմամբն նստեց մեծ պարսկական լուսամոի առաջին վեհ. Շահի հանդէպը, ինչպէս մենք արտաքուստ նկատում էինք, որին և հարցրեց վեհ. Շահը յառաջ Էջմիածնի մայր Աթոռոյ ներքին և արտաքին կառավարութեան, և այժմեան դրութեան համար, նոյնպէս և Ներսէս և Մատթէոս կաթուղիկոսաց որպիսաբար կառավարութեան, և ռուսաց ու հայոց եկեղեցական

ծիսից զանազանութեանց համար, և ապա հարցրեց Ատրպատական Հայոց արտաքին կառավարութեան համար:

Այս հարցմունքներին յարմարաւոր պատասխանատուութիւնից յետոյ Բ. Սրբազանն ոտքի վրայ կանգնելով ներկայացրեց վեհ. Շահին խնդրագիրն Հայ և պարսիկ լեզուաւ պատրաստված. վեհ. Շահը շատ սիրով ընդունելով իւր ձեռքը՝ ինքնին կարդաց զայն խնդրագիրն, և նրա հետ տուած խնդրելի առարկայից յօդուածներն, և յանձնեց Արքունի Թիկնապահ զօրապետ Եահայ խանին, որ յարմարաւոր միջոցի ներկայանէ իրեն՝ տեսչութեան համար:—Այս խնդրագրոյ հետ Բ. Սրբազանը ներկայացրեց վեհ. Շահին և Դավիժու Հայոց Ազգային դպրոցի աշակերտաց երեք տարուայ ուսումնական պտուղները, այն է Հայերէն, Դաղղերէն և Պարսկերէն ընտիր վայելչագրութիւններն, դեղեցիկ նկարներն պատկերների և քաղաքական ձևակերպութիւնների (фасадъ), նոյնպէս և ուսանող օրիորդաց շքեղ ձեռագործները և վայելուչ յօրինուածներն, զորս մի առ մի ընդունելով իւր ձեռքը ուշադրութեամբ նայում էր և կարդալով նրանց վրայ պարսկերէն գրած նկարողաց և յօրինողաց անուններն՝ հաւանութիւն ցոյց տուեց ամենին, և ապա յանձնեց յիշեալ Եահայ խանին պահելոյ: Մէկ ժամից աւելի

հարկաւոր խօսակցութիւնից զկնի՝ ակնարկութեամբ վերոյիշեալ առաջնորդող առաքեանաւորաց Բ. Սրբազանն վերսին ոտքի վրայ կանգնելով՝ շնորհակալութիւն տվեց վեհ. Շահին քաղցր ընդունելութեան համար, և արձակվելով պալատից վերադարձաւ միւսանգամ վանակ զիւղը իւր վրանը։

Դեռ չ'անցած երկու օր՝ Սրքունի խորհրդական թարգման Հայազգի պատուաւոր առաքեանաւոր Նորզուղայեցի Միրզայ Յարութիւն Եղիազարեանց գրաւոր յայտնեց Բ. Սրբազանին, թէ՝ վեհ. Շահը բարեհաճել է հրամայել որոյ հարկն է, կատարել Ատրպատականի Առաջնորդ Սրք Եպիսկոպոսի խնդիրներն, մակագրելով իւրաքանչիւր յօդուածոց ներքև բաց 'ի 18-ըդն, որ է զանգակահարութեան համար։

Թէև Նորին Բ. Սրբազնութիւնն շտապում էր շուտով վերադառնալ իւր վիճակը, բայց գործոց ընթացքը ծանր յառաջ գնալոյ պատճառաւ մնաց թէհրանումն երկար ժամանակ, ըստ որում Դեկտ. 23-ին հազիւ հազ Սրքունի հրովարտակները զլխաւոր Ատենագրիր Ռէյիս Միրզայ Մահմատի ձեռամբը հասան Բարձր Սրբազանի մօտ։

Այս գործոց շուտով կատարվելոյ համար բաւականաչափ աշխատութիւն էին կրում Ազգասէր Պարոնայքը՝ տեղւոյն վաճառականաց զլխաւոր Շուշուայ

քաղաքի բնակիչ պատուաւոր քաղաքացի (почетный гражданинъ) Պարոն Մակարն Տէր Գրիգորեանց, Արքունի խորհրդական՝ Թարգման Միրզա Յարութիւն Եղիազարեանց և պ. Հայրապետ Աւետիքեանեան Ղարաբէկեանց:

Ձ Եհ. Շահը կամենալով Նորին Բ. Սրբազնութեան առաւել ևս մխիթարել 'ի պատիւ Հայազգի ժողովրդոց Ատրպատականի՝ բարեհաճեցաւ առանձին հրովարտակաւ շնորհել առաջներորդ աստիճանի (Սարթիպի աւալի) աստղանշանը՝ հանդերձ կարմիր լայն ժապաւէնով (лента, համայիլ). նմանապէս և 'ի պատիւ Նորին Բ Սրբազնութեան շնորհեց առանձին առանձին հրովարտակներով եղբարց Սրբազանին՝ ռուսաց Աստիճանաւոր Պ Եփրեմայ Մարգարեանց երրորդ աստ. "Շիրի խուրշուդի" անուանեալ աստղանշանը, և Պ Բաղդասարին ոսկեայ մէտալ, նաև Էջմիածնայ Սինոդի ատենադպիր Պ. Սիւքիասայ Թադիանոսեանց "Շիրի խուրշուտի" նշանի երկրորդ աստիճանի աստղանշանը, նաև Դավրէժու Արժ. խաչակիր Յովսէփ Աւագ Քահանայի Տէր Յովսէփեանց, Մուժումբար գիւղի խաչակիր Տէր Մկրտիչ Քահանայի Տէր Ղազարեանց, և տեղւոյս Հայոց Ազգային դպրոցի երրորդ դասատան աշակերտաց Հայոց և Գաղղիացւոց լեզուաց վարժապետ Պ. Սամուէլի Գիւլզատեանց շնորհեց չորրորդ աստիճանի Շիրի խուրշուտի աստղանշանը,

և տեղւոյն տուրբ Աստուածածնայ անուամբ առաջնորդական եկեղեցւոյ հաւատարիմ երէցփոխան Պ. Աւագայ Մէլիք Աբրահամեանց ոսկեայ մէտալ, նաև նորին Բ. Սրբազնութեան հետ գնացող ծառայողաց՝ Յովսէփ բէկին Խոսրովեանց, Մինասէլի Սաֆարեանց և Գրիգորի Թորոսեանց նմանապէս ոսկեայ մեդալներ:

Իսկ ինձ համառօտ պատմութիւնս, որ նորին բարձր Սրբազնութեան դրագրութեան պաշտօնն էի կատարում շնորհեց հինգերորդ աստիճանի շիրի խաչի աստղանշանը:

Վերոյգրեալ արքունի հրովարտակները և շքանշանները ստանալով նորին Բ. Սրբազնութիւնն յայտնեց իւր խորին շնորհակալութիւնը Արքունի ատենադպրին, հրովարտակները բերողին՝ օրհնելով վեհ. Շահի թանգագին կեանքը և ամենայն արքայական տոհմին:

Այսպէս բաւականացած և մխիթարուած վեհ. Շահի տուած հրովարտակներովը և պարգևագրերովը՝ սկսեց աշխատել Բ. Սրբազանն հրովարտակաց հրամանները գլուխ տանելոյ համար մեծ Սպասալարի և Դվալի խարաջի ատիճանաւորաց ձեռքով, այն է, տեղւոյս Սարդարի, և միւս պաշտօնատէր անձանց վրայ առանձին առանձին հրամաններ գրել տալով մեզապատկան յիշեալ առարկայից համար:

Ինչպէս վերևն ասացի. թէ որովհետև ձմեռը վրայ

հանելոյ պատճառաւ չկարաց Բ. Սրբազանն վերադառնալ Դավրէժ, այլ ինաց թեհրանումն մինչև տարւոյս մայիս ամիսն, ուստի և հարկաւոր եմ համարում մի քանի մինչէ նկարագրել ազգայնոց սրտի ուրախութեան համար, Քրիստոսի Ս. Ծննդեան Ջրօրհնեաց հանդիսի կատարման որպիսութիւնն, որ կատարվեց այնտեղ առանձին փառաւորութեամբ նորին Բ. Սրբազնութեան ներկայութեամբ:

Պարսկաստանի Հայերը շատ վաղուց ճնշուած լինելով տիրապետողաց բռնական լծոյ ներքև, ամենևին յոյս չունէին վայելել այնպիսի շնորհաբաշխ հանդիսի տեսութիւնը, որ պարսկաստանում առաջին օրինակն էր Հայոց համար. և չէին անգամ մտաբերել, թէ Քրիստոսի սուրբ խաչն երբեմն պէտք է փայլէր Պարսկաստանի այնպիսի մայրաքաղաքի մէջ որպէս մեծին Կոստանդիանոսի ժամանակին յԵրուսաղէմ Ս. քաղաքումն:

Երբ Քրիստոսի Ս. Ծննդեան օրը մօտեցաւ, Բ. Սրբազանը հրամայեց Հայ երևելեաց տեղւոյն՝ պատրաստել Ջրօրհնեաց հանդիսի փառաւորութեան համար հարկաւոր պարագայքը—ուստի և հանդէսը կատարվեց յեռապայ կարգաւ:

1866 Յունվարի 6, Ջրօրհնեաց օրը Ս. պատարագի արարողութիւնը վերջացնելուց զկնի՝ սահմանված կարգով զգեստաւորուած նորին Բ. Սրբազնութիւնն, և

Հայոց հոգևորականաց դասուց բազմութիւնն, ժամուն պատշաճ "Յաւուրս վերջին ժամանակի— և Սրբոյն արդարութեան„ Ս. Յովհ. Սկրտչի շարականն երգելով՝ ամենայն Հայերի և շատ պարսից բազմութեամբ դուրս գնացինք քաղաքից Ղազբնի անունով մեծ դարպասից, և հասնելով մի մեծ առուի եզերքը, սկսեցին հանդիսի համար պատրաստած տեղումն կատարել ջրօրհնեաց կարգը՝ ինչպէս Եկմիածնայ մայր աթոռումն:

Հանդիսիս փառաւոր կատարմէն ոչ միայն Պարսկաստանէ, և մանաւանդ Թեհրան քաղաքի՝ սուրբ Խաչի փառաւորութեան կարօտ Հայ—քրիստոնեայ ժողովուրդը անպատմելի հոգեխառն ուրախութեամբ մխիթարվեց, խոր տպաւորելով այս աքանչելի և փառաւոր հանդիսակատարութեան քաղցր յիշատակը իւրեանց սրտերի մէջ, և յաւիտեան հնչեցնելով որդւոց և թոռանց յիշողականութեան տախտակի վրայ, այլ և այն հեռաւոր մեր ազգայինք, որոնք Քրիստոնէական սուրբ զգացմունքով հարստացած են:

Երբ վերջացաւ հանդիսակատարութեան կարգը, Սմեռնաւ օրհնած ջրոյ մէջ դրած Ս. Խաչը բազմացրին կնքահայր Ղարաբեկեանց Ա.ևոլիք խանեան Պ. Թադէոսի գրկումը. բայց երբ սկսվեց միւռոնթափէքի հանդէսը կատարվել „Ս.ռաքելոյ աղաւնւոյ„ շարական երգելով տէրութենից նշանակված զինուորաց խումբը

արձակեց հրացաններն միանգամ միայն. ինչպէս նախապէս կարգադրված էր:

Հանդէսը կատարվելուց զինի նորին Բ. Սրբազնութիւնը յետ գոհաբանական փառք ու պատիւ մատուցանելոյ մանկացելոյն Աստուծոյ Տէր Յիսուս Քրիստոսին. որ յաջողելով հանդիսիս կատարուիմն՝ փառաւորեց Քրիստոնէական ամենասուրբ հաւատոյ պարծանք սուրբ խաչի և աւետարանի լուսապայծառ անուններն՝ որպէս յամենայն ժամ, ամենայն ուրեք, համառօտ բանախօսութեամբ մխիթարելով Հայ—հասարակութեան սիրան ու հոգին՝ մի առ մի բացատրեց նորանց սուրբ հանդիսիս խորհրդեան և ծիսակատարութեան պարզ միտքը, և բարեմաղթելով յԱստուծոյ խնդրեց Քրիստոնեայ Կայսերութեանց համար այս և այն կեանքումն երջանկութիւն. և ապա յատկապէս բարեմաղթեց վեհ. Նարարդին Շահի կենաց համար երկարութիւն՝ շնորհակալութիւն մատուցանելով նրան 'ի դիմաց իւր, և ազգին. որ նորա բարերար կամաց շնորհիւն այսօր տէրունական սուրբ խաչը ամենապայծառ փառաւորութեամբ ամենայն ազատութեամբ փայլեց պարսկաստանի արքայանիստ մայրաքաղաքում, որոյ օրինակն ամենևին չէր տեսնված ցայսօր:

Այնուհետև էր տեսնել բազմութեան սրտից ուրախութիւնը, որ փայլում էր ամենի երեսներին՝ ըստ ուրում որպէս Հայոց բազմութիւնը քրիստոնէական սուրբ

զգացմունքից սիրված օրհնած ջուրը սրսկում էին երեսներին, և շուշաններով վեր էին առնում տուն տաներից՝ վաղեմի բարեպաշտ սովորութեան համաձայն. նոյնպէս և Պարսից բամբիռնը այն օրհնած ջրից՝ Հայերից օրինակ առնելով, սրսկում էին երեսներին և սմաններով վերցնում էին տուն տաներից:

Վերջապէս Քրիստոնէութիւնը ամենայն ազատութեամբ զերապանծ փայլում էր ամենայն հանդիսակցաց երեսին, և նկատողը կարծում էր, թէ Հայաստաններից բուն մայրաքաղաքների մէջ էր տեսնում այն հանդէսը՝ Հայ—Քրիստոնեայ թագաւորութեան ժամանակներում:

Հանդիսիս կատարման կարգը ապահովացներից համար՝ այնտեղ էին քաղաքապետն Թեհրանու (Քեպանթարն) Զրաղալի խանն, և թաղապետքն, (քեատխուդայքն) թէև շնորհիւ վեհ Շահին արդէն ապահովացած էր իսպառ, տէրութիւնից նշանակված զօրքովը, որն այժմեան լուսաւորեալ դարոյս լուսաւոր Տերութեանց բարեկարգ կառավարութեանցն հետևելով՝ ջանք է անում ապահովացնել իւրաքանչիւր կրօնի տէր հպատակաց արտաքին կառավարութեան վիճակը, որպէս յայտնի է արդէն:

Բանախօսութիւնը վերջացնելով նորին Բ. Սրբազնութիւնը հանդերձ Հայ երեսելի վաճառականաց բազ-

մութեամբ վերադարձաւ յիշեալ կնքահայրը Պ. Թադ-
թէոսի բնակարանը, ըստ հրաւիրման նորա:

Վերջապէս այսպէս ազատ օրեր անցուցանելով թեհ-
րանումն մնացինք մինչև տարւոյս գարնան ժամանակը
որ կարելի եղև ճանապարհորդութիւն սկսելը վերադառ-
նալով դէպ ի Դալրէժ և յայնժամ ըստ հաճութեան
նորին Մեծութեան աւագ երեքշաբթի օրը Ն, Բ, սրբ-
բազանութիւնը կրկին ներկայացաւ արեգակնափայլ
շահին իւր շնորհակալութիւնը յայտնելու և վերա-
դարձի հրաման խնդրելու համար: Նորին մե-
ծութիւն սիրով ընդունելով ազգի հովիւը հրաւիրեց
նստել մերձ շ.քեղազարդ դարապային, կէս ժամու չափ
խօսեցաւ նոր կաթողիկոսի ընտրութեան և այլ առար-
կայից վրա, յուսադրելով բարւոքել Ատրպատականի և
բոլոր իւր տէրութենի հպատակ Հայոց վիճակը. յետ
այնորիկ երբ Բ. Ս. կանգնեցաւ յոտին, մատոյց արքային
մեծ գոհունակութիւն մաղթելով յաստուծոյ մշանջենա-
ւորել Ն. Մ. գահը և կամէր դուրս գալ:

Արեգնափայլ շահը յառանձին նշան սիրոյ հրամայեց
առաջին թիկնապահին գերաստիճան Եայհեայ խանին,
որ Ն. Բ. Ս. պատկերը վերառնուն լուսանկարիւ՝ (ֆոտո-
կրաֆիա) այն հանդերձներով և նշաններով ինչպէս ներ-
կայացել էր. իսկոյն հրաւիրեցին Ն. Բ. Ս. այլ սենեակ,
ուր պատրաստի էր պատկերահանը իւր գործիքներով,

երկու անգամ վեր առին պատկերը մեծ և փոքր, դեռ կէս ժամ չէր անցել կրկին հրամայեցաւ յարքայէն նրատուցանել Ն. Բ. Ս. փառաւոր աթոռի վերայ և այնպէս վերառնել պատկերը, այս հրամանը ևս կատարեցաւ խիստ թեամբ: Նոյն օրը ողորմած շահը հրամայեց շնորհել արքունի գանձարանից Ն. Բ. Ս. ճանապարհածախս հարիւր թումանի պարսից դրամ:

Սպասալարն, որ է զինուորական նախարարն Սրբազանին թէհրան եղեալ ժամանակը զանազան յարգանք և օժանդակութիւն ցոյց տալից ջոկ, նոյն օրը զրկեց 'ի ցոյց յատկական սիրոյ և շնորհաց առ Ն. Բ. Ս. մի պատուական թիրմայ շալ:

Այս միջոցին բարձրագոյն հրովարտակաւ Ռուսաց կայսերութեան Նորին Բ. սրբազնութիւն ստացաւ Էջմիածնի կաթուղիկոսութեան տեղակալի և Սինոդի նախագահութեան պաշտօններն. և հրաւիրուեցաւ Էջմիածին:

Ինչ հանդիսով որ Դալիժից բաղմութիւնը ուղեւորեց Նորին Բ. Սրբազնութեան դէպ 'ի Թէհրան, նրանից աւելի բաղմութեամբ և հանդիսի փառաւորութեամբ ընդունեց Թէհրանից վերադարձին:

Յուսալ եմ, որ դուք անշուշտ կ'բաւականանաք այս համառօտ տեղեկութեամբս և կ'բաւականացնէք ազգասէր Հայ եղբարցն:

Բաբաջան-բէգ Շախիեանց:

Ի 1-ն մայիսի 1866 ամի:

Դաւրէժ:

ԽՆԴԻՐ։

Զերդ արեգակնափայլ բարձրութիւն

Ամենողորմած արքայ ընդհանուր պարսկաստանի։

Բացերևակի յայտնի եղև մեզ Վսեմափայլ Արքայիդ հոգևկան ըղձիւ հաճութիւն՝ զի զՀպատակս քրիստոնեայ ազանց, որք են ընդ հզօր պաշտպանութեամբ Զերդ արքայական բարձրութեան, միշտ զխաղաղ և զանվրդով ունելցին զասպարէզ կենցաղավարութեան և անձնական կատարութեան 'ի քաղաքս և 'ի գիւղս այս սահմանացն Արևելեան, որոց զփոքր առաք մեք 'ի ժամանակս ծառայելոյ մեր մերազն ժողովրդականաց խակական և բնիկ հայոց 'ի միջոցի հընդեց ամաց. այլ զի հոգեառանդն փափագմամբ սեպուհ պարտաւորութիւն անձինս համարեցի անձամբ անձին ներկայանալ առ Աթոռ մեծի Արքայիդ, և մատուցանել զխաշուրթն գոհունակութիւն 'ի դիմաց ազգին իմում, և զիմ իսկ զլխովին, և աղերսել զԱստուածա-

զՕր Արքայդ յաղագս քանի մի կարևոր դատեցեալ ան-
դրուածոց վասն առաւելագոյն ապահովելոյ զվիճակ
ինձ յանձն եղեալ փոքրիկ հօտին հայոց, և բարւոք կա-
ռավարութեան վանորէից և եկեղեցեաց, զորս ամենա-
հպատակօրէն ընդ սին արկանեմ առաջի Աթոռոյ մե-
ծի և զՕր Արքայիդ 'ի անօրէնութիւն հանդերձ ար-
դասեօք երկամեայ վաստակոց աշակերտացն և օրիոր-
դաց ազգային դպրատան Թարվիզու քաղաքի կառուցե-
լոյ յանուն ձերդ բարեփառ Տէրութեան: 1865.
Օգոստոս 4 'ի Թեհրան:

Վասն բազմաանեայ կենաց Արքայական Մեծութեան Ձերոյ
ջերմեռանդ աղօթարար, Առաջնորդ Հայոց Ատրպատականի՝
Գէորգ Արք Եպիսկոպոս Վեհապետեանց:

ԽՆԴԻՐ ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ

Առաջին, նորոգել զհրովարտակս Ձերդ արքայական
բարձրութեան, շնորհեալս 'ի վաղուց յաղագս այնոցիկ
անձանց հայոց, որք յետ ընդունելոյ զկրօն Մահմէտի,
առանց յայտնի պատճառանաց չունիցին բնաւ իրաւունս
յարուցանել վէճ ինչ ընդ մերձաւոր ազգականաց իւ-
րեանց առ 'ի կորզել զժառանգութիւն տոհմականաց
իւրեանց, զրկելով բռնաբար և կաշառօք զայնս որք
անան 'ի հայրենի դաւանութեան իւրեանց:

Երկրորդ բարեհաճեսցի Ձերդ արքայական բարձրութիւն շնորհել 'ի նորոյ զառանձինն հրովարտակ, զի եթէ որ 'ի Հայ հպատակաց ձերոյ որպիսի և լցէ պատճառաբերութեամբ, կամ վասն հարստահարելոյ զազգակցաց և զենանախս իւր, կամ 'ի պատճառս շահասիրութեան անձին և կամ վասն սիրահարութեան ընդ ուրեք դիմեսցէ առ կրօն խալամի, մի' լեցի թոյլտուութիւն այնպիսւոյն առանց ծանօթութեան և վերահասութեան Առաջնորդայն Հայոց Արարատեանի զարձուցանել 'ի հայրենի և յուզղափառ հաւատոյ առ կրօն Մահմէտի եթէ ո՛չ .քննեսցի նախապէս առաջի զլեռաւոր հոգևորականաց երիւց կողմանց. և այնպիսին հերքեսցի 'ի ժողովոյն թէ չունիցի օրինաւոր պատճառ:

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Հրովարտակ արքունի կնքով առ Ազիզ խան Արդարին: Շնորհօք առատագութ մեծամեծար զթութեանց ամենազորմած և Օգոստափառ թագաւորին Կայսեր բարձրացի մեծաւ ասահզափայլ փառօք, ինքնազոհ և հաւատարիմ ծառայն մեր Ազիզ խան: Գիտելի է, զի ըստ կանոնի ամենասուրբ օրինացն մեր որպէս առաջագոյն տեսանեալ եմք, որք 'ի Հայոց փոփոխողաց և այլայլողաց զհաւատս բնաճին 'ի կոչումն այնպիսեաց 'ի հա-

հաստ սրբութեան փառացն Խլամի թէպէտ ոչ զոյ առ այս խտրոց ինչ և արգելաւիթ խափանումն ինչ այսր սրբազան գործոյ, որ 'ի փոփոխումն հաւատոյ իւր, իւրաքանչիւր ոք ազատ է և բացարձակ կարէ ընդունել զկրօն Խլամութեան, բայց հարկ է ճանաչել և իմանալ, զի ոմանք 'ի պատճառս թշնամութեանց և չարամտութեանց աշխարհական կրից, և ոչ 'ի ժառանգել զբարիս երանութեան հանդերձեալ կենաց, յայտնի միջոց.ք և զօրաւոր առիթ.ք իւրեանց արարեալ այնպիսի անձին.ք, կամին տառապեցուցանել զընտանիս և զմերձաւորս իւրեանց յաւիշտակելով զնոսա և զհարստութիւնս նոցա, միանգամայն յանձն իւր սեպհականել. վասնորոյ այսպիսի գործ.ք մեծի .քննութեան և մտերմման ծանօթութեանց արժանի դատին: Այսպէս, յայտ հրամանի, զոր պարտ և պատշաճն է, սովին մեծաւ հրամանաւ վաւերացուցանեմք որք 'ի Հայկազանց և այլոց ազգաց բնակելոց յԱրարատեան աշխարհի հաճեցի յօժարութեամբ դառնալ 'ի հաւատոյ իւրմէ առ սրբազան և հաստատուն կրօն մահմէտի, վերաքննութիւն անձնական վիճակի և գործոցն հանգամանաց նորա արժան է առանց ձեռնտուութեան ոչոց և լոյէ անձանց յայնպիսի գործս, թողուլ միայն վերահաստութեան օրինականացն երևելի գիտակաց հոգևորականաց և աստուածաբանից երկրաքանչիւր

կողմանց և զկարելի և զարժանին 'ի վեր երևեալ գործս վճռահատել, որով ճանաչեսցի թէ հաւատացեալ անձն այն ինքն բերի՞ցէ զհաւատ ճշմարտին մահմէտի, և զոր ինչ արժանի վճիռ եղեցի 'ի գործս այնպիսի, այնր անձին իսպառ գինջի՛ք. և եթէ հակառակ իցէ կամք նորա, յայտնեսցի բարձրագոյն օրինականացն չարակամութիւն նորա, ապա ուրեմն 'ի բաց հերքեսցի և մերժեսցի իսպառ այն. յայսոսիկ գործս զվերջին ջերմեռանդութեան և աշխատութեան ճիգն 'ի գործ դիջի՛ք և պարտապան կացուսջի՛ք զանձն ձեր։ Հրամայեցաւ 'ի թէճէպ ամիս 1282 ամի։

ԵՐՐՈՐԴ ԽՆԴԻՐ.

Երրորդ՝ Բարձրագոյն հրամանաւ և Արքայական հրովարտակաւ հրատարակեսցի, զի Ամերիկացի միսիոնար քարոզիչք և դրավաճառք միանգամայն անհետացին 'ի պարսկաստանէ 'ի քաղաքաց և 'ի գիւղս, որք յորդորանօք և դրամական օժանդակութեամբ բազում խռովութեանց և երկպառակութեանց լինին առիթ և ցանեն որոմն 'ի մէջ ժողովրդականաց Հայոց. և խանգարեն զբարոյականութիւն տեղական հատարակութեան Հայոց անդամ և ցաճկաց։

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՆՈՐԻՆ.

Առանձին հրովարտակ արքունի կնքով։

Պերճապատիւ Ազիզ խան, հաւատարիմ մեր Արքայական Սիմոռոյ, պատուիրմամբ մեծաւ յանձն առնեմք մեծարու տիրասէր իշխանութեանդ հարկ համարել զեզ, և ըստ արքունի հրամանիս մերոյ ոչ ներել բնաւ և ոչ թոյլատրել 'ի քաղաքս և 'ի գիւղս Ատրբէջանու բնակիլ որպիսի և իցէ անձին 'ի քարոզչաց կամ 'ի գրավաճառաց որք ունին 'ի հերետն հետէ զբնակութիւնս 'ի սահմանին Ռուսիոյ յազգէ Ամերիկացեաց և Անգղիացւոց, որք խանդարեալ զպարզ բարոյականութիւն այլադաւան ազգաց քրիստոնէից և խալամութեանց մերոց հպատակաց՝ որպէս և վաղուց կարգադրեալ ունիցիս եմք. անշուշտ պարտ անձին համարեցէք 'ի կատար ածել զմիտս արքունական հրամանին։

Գրեցաւ յամենանն թվին 1282 ամի. կամ 'ի Նոյեմբերի 1865։

ԽԵԴԻՐ ՁՈՐՐՈՐԴ.

Զորրորդ՝ Բարձրագոյն հրաման լեցի և բարեհաճ

Հրովարտակ Սրբայական. զի Հայք բնակեալք յԱրքայական սահմանին պարսից, մի՛ ծանրաբեռնեսցին այլևայլ հարկատուութեամբ 'ի ձեռաց կալուածատերց և իշխողաց, կարգելոց 'ի զիւանէն. որք բռնի պահանջեն զաւելորդ մշակս, զփայտս վառելի. զրաժս վասն հարսանեաց, և առաւել քան զչափն հարատահարեն զընակիչս ամենայն մասամբք. այլ բաւականացին այնու միայն, որ հաստատուն պահի 'ի մասնաւոր զիւանաց և 'ի քիմաթիչայս, զոր բարձրագոյն հրամանաւ ձերդ Մեծութեան ընկալեալ է, լրիւ զսահման և զեղանակ չափու :

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ.

Հրամանն Նորին Գերազանցութեան՝ մեծազօր վէզիրի և սպարապետի առ Սզիզ խան ընդհանուր կառավարիչ և սպարապետ Արարատեան նահանգի. բարձրագոյն հաճութեամբ Սրբային, Արժանընտիր մեծարելիդ իմ, որպէս յայտ արարին մեզ, և ակն յանդիման յայտնեցաւ բանիւ, 'ի մասին հաստատման Արքայական հարկատուութեանց հայոց եղելոց յԱրարատեան երկրի. մեծամեծ վնասք և չափազանց պահանջմունք, նա մանաւանդ 'ի զանազան գործս և յիրաղութիւնս համաշխարհական անասելոր և արտա-

քոյ կարգի և իրաւանց ծէսք և սովորութիւնք՝ ծան-
րանան 'ի վերայ նոցա, որովհետև այդպիսի անիրա-
ւութիւնք և անարգար վարք զլեռաւոր կառավարչաց
ընդ ժողովրդոց ընդդէմ զտանին կամացն Աստուծոյ
Արքային և ընդհանուր անդորրութիւն և խաղաղու-
թիւն հասարակաց ազգին համաձայն երևին շնորհաց
նորա, վասնորոյ ըստ անդարձ բարձրագոյն հրամանի Ար-
քայական ասէք ձեզ պատուէր հրամանի, զի նախ՝ վասն
հարկահանութեան հրամայեսջի՛ք հասարակաբար, ա-
մենեքին մի՛ զուցէ պատահեսցի արտաքոյ կարգի
հաստատեալ դիւանի պահանջեսցեն զհարկ 'ի նոցա-
նէ, և որով չափով և կարգադրութեամբ վաւերա-
ցեալ և հաստատեալ զտանին, վարել և կառավարել
զնոսա ուղղութեամբ, բ. կալուածատէրք և տնտ-
ուէրք ամենեքին չհամարձակեսցին պահանջել զպան-
ման իրս որպէս զվայտ և զմշակս այլով.քն հանդերձ,
չծանրաբեռնել զնոսա սոյնգունակ ապօրինաւոր իրօք,
'ի վերայ այսր ամենայնի պատուէր հրամանի լցի ա-
մենեցուն կառավարչաց քաղաքական, ըստ զի օրինի՛
որպէս 'ի վաղուց իսկ հետէ հաստատեալ զտանի, նո-
վին եղանակաւ զիրաւունս հարկահանութեան զխնա-
նի 'ի գործ դնել, նաև կալուածատէրք նովին կար-
գաւ և իրաւամբ վարեսցին ընդ հասարակ երկրագոր-
ծաց իւրեանց և ամենեքին չլինիցին վրդովմունք և ան-

կարգութիւնք 'ի նոցանէ. զայս օրինակ յամենայնի և ամենայնիւ լինիցին կառավարք ուղղիչք, անխառն ճնաւցին ընդհանրապէս, առաւել քան զայս չեք ինչ արժանիս 'ի յաւելուլ, յամեան ռէջիպ 1282 թուականին. կամ յամեանն նոյեմբերի 1865 ամի։

ԽՆԴԻՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Հինգերորդ՝ առանձինն հրաման լոյի Աբքունի կընքով իբրև հատատուն և հիմնաւոր կանոն, վասն հայոց հպատակաց Ձերդ Մեծութեան, որք 'ի պատճառս հայթայթելոյ զապրուստ կենաց և կառավարութեանց իւրեանց պանդխտանան 'ի Ռուսաստան կամ յայլուր վասն մշակութեան. և 'ի ժամ վերադարձման նոցա 'ի հայրենիս իւրեանց, սահմանապահք և ռախտարք բռնի և անխնայ յարձակեն 'ի ձեռաց նոցա զմնացեալսն 'ի ձեռն բերեալ զդրամական ապրուստս նոցա, զոր բազում տառապանօք և քրտամբք վաստակեալ են, կարգադրեսցի զի բաց 'ի օրինօք նշանակեալ հարկաց մի՝ վշտահար արասցեն զնոսա և ձեռնունայն դարձուսցեն առ ընտանիս իւրեանց, իբրև օրինազանց ընդդէմ խղճի մտաց համարի այս գործ և արարք սահմանապահաց։

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ.

Հրաման Սպասալարին բարեհաճութեամբ Ազգային առ Ազիզ խան Սարգսին քօղլու։

Արժանայ՝ երդ իմ. որպէս երևեցաւ և բացերևակի յայտնեցաւ Տէրութեան. ոմանք 'ի Հայոց Ազգէն բնակելոց Յարպատական երկրի՝ վասն մշակութեան և քրանաբեր վաստակի չուին 'ի կողմանս Ռուսաստանի, և 'ի վերադարձման պահու սահմանակալք և ուղղապահք զանազան պատճառանօք հարստահարեն զնոսա և յափշտակեն զինչս և զդրամս նոցա շահեալ. արդարև յերևել այդպիսի անիրաւութեանց և անկարգ վարուց կառավարչաց առ անանկ աղքատս և ողորմելիս Հայոց միանգամայն հեռի երևին յիրաւանց և յարդարութենէ. չէ՛ պարտ սահմանակալաց և ուղղապահայն ճանապարհի գտանիլ ինքնադլուխ և ազատ որ զոր ինչ և կամիցեն առնիցեն ճանապարհորդաց, 'ի վերայ այսր ամենայնի վճիռ է արդարադատ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան և թագաւորական կամաց, ճանձրութիւն տամ Ձերդ Գերազանցութեան, յայսպիսի գործս զվերջին ճիգն աշխատութեան և քննութեան 'ի գործ դնել. օրինաւոր կարգադրութիւն հաստատուն հաստատեցի՝ 'ի սահմանս, որով բնաւ երբէք վիճակի Հայոց նեղութիւն,

վիշտ, և տառապանք իմն չ'կայացեն և առաւել քան զմի դրամ կարգադրեալ և հաստատեալ հարկի չ'պահանջեցեն 'ի նոցանէ և ով որք 'ի տահմանապահաց և ճանապարհակալացն դժբեցի և 'ի կարգէ հաստատութեան դիվանականաց և տեղական հեռացի և աւելի ինչս առնուցու 'ի ճանապարհորդացն հայոց արժան է ձեզ պատժել զնոսա և դարձուցանել զվնասն և տալ նոցա զպատուհաս լիակատար դժբոդացն օրինաց և բարեկարգութեան՝ և որով և ոչ եղանակաւ անիրաւութիւնք և հաստահարութիւնք բարձցին միանգամայն և պահպանեսցին 'ի Հայոց, 'ի վերայ այսր ամենայնի վերահասութիւնք և քննութիւնք անաչառ գործադրեսցին ձեօք, առաւել քան զայս չիք ինչ 'ի ծանօթութիւն. յամենայն ՌԵՋԵՐ 1282 թիւ. կամ 'ի նոյեմբերի 1865 ամի:

ԽՆԴԻՐ ՎԵՑԵՐՈՐԴ.

Վեցերորդ՝ բարեհաճեցի Զերդ Արքայական Բարձրութիւն ստատիկս արգելուլ իշխանաւորաց պարսից Աստրպատականի 'ի կողմանս կողմանս կարգեալս 'ի դիվանէն, և կամ ընիկ կալուածատէրք, որք անիրաւութեամբ և չարադրդիւ մոլութեամբ յանկարծակի յափշտակեն 'ի դաշտաց, յարտորէից և 'ի ճա-

դասարհաց զաղջկունս Հայոց, և շարաչար հեսևանօք երկիւղ ասն չզառնալ միւսանգամ 'ի սուն հօր իւրեանց, այլ վասն մոլեռանդն ըղձից զարձուցանեն առ կինս իւրեանց, առանց յօժարութեան և հաւանութեան իւր և ծնողացն, որ ոչ օրէն է և ոչ արժան զայսպիսիսն առնել:

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ.

Հրովարտակ Արքունական կնքով ինքնազլուխ և ամենահաւատարիմ ծառայն Ազիզ խան և Մեծ Սպարապետ տէրութեան յաւերժահատատ պետութեան առատագութ ողորմութեամբք և մարդասիրական խնամօք ամենասուրբ շնորհայն պետականի Օգոստափառագունի Արքային Արքայից ճոխացեալ: Գիտելի է, զի որպէս ազգարարութիւն եղև զարշապարացն ոտից զարդարեալ ականակուռ փայլուք արքութեան և արդարութեան ծիրանապատակ Արքային, 'ի ժամանակս ժամանակս ոմանք 'ի սինլքոր հասարակութենէ պարսից յանդգնեալ յարձակին 'ի վերայ պարկեշտասուն կանանց և օրիորդաց Հայկազանց յԱտրպատականի և զվարս անվայելուչս ցուցանելով նոցա, զօրիորդս առանձնակի հանդիպմամբ կորզեն զնոսա և բարձեալ չտանին ուր և կամին. որովհետև պահպանութիւն

պատուին և պարկեշտութեան և հոլանաւորութիւն ընչից և ընտանեաց ընդհանուր ժողովրդեանց պատկանի. քաջաջան արիութեան և առաքինութեան մեծի Օգոստաիտառ հպատակելոցն թագաւորի, վասնորոյ պատուէր տամք հրամանի տիրասէր և առաքինի պաշտօնէիդ ընաջինջ առնել սոյնպիսի արկածս աօրէնաւոր ընթացից և անգոնելի սովորութեան, և զայնպիսի զօրտակար հոգս ջանացողութեան և աշխատութեան առնուլ, զի այսուհետև մի՛ բնաւ պատահեսցին արկածքդ այնպիսի, որով Հայք բնակեալք յայնոսիկ կողմանս կարողացին կեալ խաղաղ կեցութեամբ և անվրդով վարուք յուսալի մնօք առ 'ի չպատահելոյ նոյնպիսի գործոց. և եթէ ո՛վ ոք յարձակմամբ ի վերայ կանանցն՝ իգական սեռի յանցաւոր գտցի. և կամ՝ յօրիորդաց նոցա կորզեալ յափշտակեսցէ առանց բանաւոր պատճառի, իսկ և իսկ արժան է պատժել զայնպիսի յանդգնեալ անձինս, որ ընդդէմ խղճի մտաց և իրաւանց չարագործ գտանին, և պաշտպանել և հոլանաւորեալ պատսպարել զպատիւ պարկեշտութեան անձին նոցա, անշուշտ՝ ըստ բարձրագոյն հրամանի կամակատար գտանիջիք և զանձն ձեր պարտապան դատեսջի՛ք. գրեցաւ յամսեան Ռեջեպ 1282 թուին, յամսեանն Նոյեմբերի 1865 ամի.

ԽՆԴԻՐ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

Եօթներորդ՝ ամենաջերմեռանդ Հայ հպատակք ձերդ Արքայական բարձրութեան բնակեալք 'ի սահմանին պարսից 'ի Ղարադաղ ոչ սակաւ հալածանս և չարաչար վիշտս կրեն 'ի Մահմուտ խանէ՝ կառավարչէն սահմանին. մինչև զրեթէ խպառ գոյութիւն լինին յամենայն ընչից և կալուածոց և 'ի սեպհական սարդուածոց իւրեանց յաղագս անսովոր բռնութեանց իւր, և եղբարց իւրոց, վանորոյ և հպատակք Ձերդ Մեծութեան ցիր ու. ցան լինին ամի ամի քսան կամ երեսուն զերդաստանք յայլ երկիր օտար, որոց բնակութիւնք մնայ աւերակ. վասն այսորիկ աղերս արկանեմ առաջի աթոռոյ ձերդ Արեգակնափայլ տէրութեան առանձին հրովարտակաւ ապահովել զվիճակ տեղական հայոց. զի մի աստանդական լիցին 'ի վնաս իշխանութեան Պարսից :

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ.

'Ի դիմաց դվալի խարաջի Արքունի հրամանաւ առքօլու Սարդարն.

Պատուելիդ իմ, 'ի պատճառս դադարեցուցանելոյ զզրկանս որդւոցն քարեյիշատակ Մահմուտ խան չե-

լէպեանլոյ Ղարադաղցւոյ, որ յառաջ քան զայս ձեռումդ դերազանցութեան նկարագրեալ էի. թէպէտ Աբքայաշնորհ Մահմադ դուլի խան զլնաւոր վերաուեչայն անցագրոյն ընդհանուր Աստրպատական նահանգի ծանուցեալ էին, որ ըստ հրամանագրութեանց ուելոյ 'ի ձերդ գերազանցութենէ բարձր ասպիճան Մահմուտ խան և միւս ժառանգք հանդուցելոյն յիշատակելոյ ուխտադիրս տուեալ են, որ յետ այսորիկ ընդ հայկազուն հասարակութիւնս զկարևոր ընթացս քաղաքավարութեան և մարդաշահութեան յանձն առեալ անդորրս և անխռովս արասցեն զնոսա, զորպիսութենէ որոյ հանգամանացս լուսաշաւիղ գարշապարացն Օգոստափառ արքայի և մեծի հզօր և դերապանծ կայսեր հովանեցելոյն Աստուծոյ զկուցաք: Այդ որովհետև յիշատակեալ հայքդ գտանին 'ի սահմանս բնակեալ. պարտ և պատշաճ է, որ զձերդ բարեջան խնամն հովանաւորութեան և անաչառ պաշտպանութեան 'ի յաւելումն հանդարտութեան և ընդ խաղաղ վիճակի հասարակութեանց այնոցիկ կողմանց առաւել քան զառաւել առատացեալ 'ի կիր արկցի. ձանձրութիւնս տամ ձեզ, որ եթէ Աստուծով բարեկարգութիւն, զոր 'ի սէտս նոցա 'ի գործ եղեալ է.ք, հաստատութիւն կալցի և ժառանգք հանդուցե-

լոյն յիշատակելոյ զկանոն արդարութեան և իրաւանց
խղճի ցուցեալ՝ հանդիսաւ արասցեն զնոսա, յոյժ բարի
ի ձերդ գերազանցութեան կուսէ խրատք և համոզ-
մունք լինիցին, զի ոչ բնաւ 'ի բարեկարգ շաւղէ գայ-
թեսցեն առ 'ի բերել 'ի ձեռն զանդրդիր և անխառն
կեցութեան և վիճակի խաղաղութեանց ջանս կատա-
րելագոյնս եղեալ, փոյթեռանդ լինիջի՛ք, ապա ուրեմն
զ՞ինչ օգուտ յուխտաւորութենէ և խոստմանց նոցա,
անշուշտ 'ի կեցութենէ բարեվիճակութեան նոցա ոչ
կարէք լինել ապահով և այլ ինն կարգաւորութիւն
պարտ է անօրինել, որ զհանգամանացն որպիսութենէ
նորա նորին բարձրապատիւ արքայաշնորհ խանին յի-
շելոյ առարկաբար հրամայեսցի, որ նկատել զգործ և
զկարգաւորութիւն ձերդ գերազանցութեան 'ի գործ
դիցէ. և զհայկազուն ժողովուրդս զայնոսիկ 'ի բանու-
թենէ և հարատահարութեանց նոցա պատապարեալ
պահեսցէ, ակնկալու և յուսալի արասցեն զնոսա, որով
և լիցէ եղանակաւ անդորրութեան հատարակութեան
հայոց անկ և արժան է, անդորրամիտ և ապահովս
առնելով զնոսա, մի՛ երբէք վտրովեսցի միտք նոցա և
մի ցրուեսցին, այլ հաւաքումն համադրումարութեանց
կարի կարևորս դատեսցին, անտարակոյս ձերդ գերա-
զանցութեան կատարեալ շնորհս ցուցեալ անօրինեալ.

քարեկարգութիւն կարելի յայսմ գործոյս տարջիք. առաւել քան զայս չեք ինչ 'ի ծանօթութիւն. զրեցաւ յամենայն Ռեջեբ 1282 ամի. կամ յամենայն Նոյեմբեր 1865 ամի։

ԽՆԴԻՐ ՈՒԹԵՐՐՈՐԴ.

Ութերորդ՝ ամենախոնարհաբար առաջի արկանեմ Սիրոյդ մեծի Տէրութեան ձերոյ զխնդիր իմ յաղագս հաստատուն պահելոյ զդպրոցս հայազն ձերոց ամենաջերմեռանդ հպատակաց Թարվեզու քաղաքի, որ կառուցեալն է 'ի քանի ամաց յանուն ձերդ Արքայական Բարձրութեան, նշանակել զդրամական մշանջենաւոր օգնականութիւն վասն առաւել յառաջադիմութեան այնորիկ, որոց զանդրանիկ պտուղ և արդասիս երկուց կամ երից ամաց ներկայացուցանեմ ընդ ամին՝ զասնեերդորդ ձեռագործս օրիորդաց, զնկարս աշակերտաց և զվայելչագրութիւն նոցա 'ի պարսից, 'ի հայ, և 'ի գաղղիացի լեզուս, որոց թիւ երկաքանչիւր սեռի հասանի մինչ ցերեք հարիւր հոգիս. որք անդուլ աշխատութեամբ օր ըստ օրէ պայծառացուցանել ջանան զանուն և զփառս Արքայական Բարձրութեան ձերոյ 'ի Պարսկաստան։

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ.

Հրովարտակ արքունի 'ի սակս հաստատութեան ծախուց Արամեան Դպրոցի Դավրէժ քաղաքի.

1459.

Զի որովհետև դատախարակութիւն ազգաց ազգաց ընդ հովանաւորութեամբ բարձու և հզօր տէրութեան յաւերժական հովանաւորին և հանապազ նպատակ անաչառ Օգոստափառ և առատագութ շնորհաց և ողորմութեան մեծի պետական իշխանի Կայսերութեան հաստատի առ այս, որ հայք բնակեալք յիշխանանիստ մայրաքաղաքին Թաբրիզայ վասն մանկատածութեան և դատախարակութեան հայկազունք զաւակաց վարժարանին հիմնադրեալ են, և զուսմունս հմտութեանց և դպրութեան 'ի զանազան դիտութիւնս անդադար ուսուցանեն զմանկունս վասն այսորիկ 'ի նկատողութիւն և 'ի համարումն հաստատութեան և բարեկարգութեան գործոյ այնր դպրոցի զերկու հարիւր և յիսուն թումանս 'ի վերայ վերահաստութեան և յարատևութեան մշանջենաւոր նշանակեցաք, առ 'ի բառնալ զծախս կարևորս և զպիտոյս յարաբերելիս ուսմանց ուսուցչաց կարգադրեցաք, որ զգումարն զայն 'ի սկզբանէ առաջնիկայ ամի, (ուռվիլ) կոչեցելոյ բարեգուշակ և բարեբաստ տարւոյ վաւերացուցաք, որպէս զի 'ի յապագայս յամայր ամն անդադար ամի ամի, յեռ բարձման զերկու տասանորդ 'ի հարիւրէն ըստ սովորութեան տուվմարին զիվանական քանակութիւն նշանակեալ գումարի հաստատի և

վճարեցի ուսումնարանին այնմիկ, որով հոգացին զպէտս ծախուց նորա և ամենայուսալի ակնկալութեամբ դատարակեցին զմանկտոխս Սրամեան, վաւերայուցիչ գործոյս այսորիկ փառաւորեալ բանալին հոգւոյ դրանցն արքայութեան և ասող համառղութեան թագաւորեալ տունին վերհարուութեան, և շողշողուն ամենափայլ անդամանդ տապանակին ուխտադրութեան մեծ ժառանգին կայսերութեան. և ծիրանապսակ թագակալին, վեհ և վսեմ Յօգաֆերտին Սիրոյ հարազատ ժառանգ թագաւորութեան յաւերժական բարձրացեալ փառօք կամակատար լինելոյն, զի յիւրաքանչիւր ամի զնշանակեալ գումարս պատկանելիս Սրամեան դպրոցին թարգիպայ յաւերժահաստատ և անսասդիւտ համարելով, հրամայեցին զի պաշտօնեայք գործոցն Տէրութեան Արքայական աշխարհի ըստ կանոնի բարեթագրութեան վճարեցին, 'ի յաւելումն վաւերականութեան բանիս 'ի մատեանս դիվանին արքունի զդաղափար հրովարտակիս այսորիկ կայսերական արձանագրեցեն և զանձինս իւրեանց պարտաւորս կացուցին. տուաւ յամենանն Ռեջեբ 1282 ամի. և 'ի նոյեմբերի 1865 ամի շնորհայ։

ԽՆԴԻՐ ԻՆՆԵՐՈՐԴ.

Իններորդ՝ անշարժ կալուածք վանից Սրբոյն Գէ-

որպայ ուժի մարդանանելոյ 'ի սահմանին Ղարադա-
գայ բռնութեամբ յանիշատակեալ 'ի Ղասիմ բէկէն յեղ-
բօրէ Հաջի բեկի, մնայ ընդ նորին ակրատութեամբ,
որպէս ջուրայ.ք վանիցն նոյնպէս տեղիք վարուցանից,
և անտառք պատկանեալք վանիցն. որոց վասն զտանին
առ մեզ զանազան ռազմք և հաստատուն կալուա-
ծաքանդիք յարքունի կուսակալաց և տեղական իշ-
խանութեանց հրաման լեցի վերադարձուցանել յօ-
գուտ վանիցն զկալուածս նորա ազատելով 'ի բուռն
իշխանութենէ յիշեալ Ղասիմ բէկի: Ըստ ամին օ-
բինակի զտանի և սեպհական զիւղն պատկանեալ վա-
նիցն Թադէոս տեղի Առաքելոյն հանդերձ կալուա-
ծովքն ընդ ակրատութեամբ Ալի խանին Մակուեց-
ւոյ, որում չեք բնաւին կալուածադիր կամ զատալոյ
և չէ նշանակեալ 'ի քիմ-ափչային պարսկատանի, այս
բռնաբար տիրեալ վայելէ 'ի վաղուց հետէ, առ այս
խնդրեմ յարքայական բարձրութենէ առանձին և
յատուկ անօրէնութիւն:

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ.

Հրավարտակ Արքունի կնքով.

Զերազանց և հաստատեալ անձնադիր ծառայ Ա-
զիզ խան և մեծ Սպարապետ անեղծանելի հզօր Տէ-

թութեանս պարսից շնորհօք մարդասիրութեան և խնա-
մածու առատապութ մեծամեծար առաքինութեամբ
մեծի Արքային լցեալ և պատկեալ պատուօք մեծա-
բեացեա, զիտելի է որ ըստ յայտարարութեան զվեստ-
ուրին Հայկազն ազանց առաջարկելոյ թագաւորական
և արքական ներկայութեան ցաճարին արդարութեան
և իրաւանց՝ բարձրապատիւ Ղասիմ բէկ Ղարադաղցին
զինչ ինչ կալուածս և մշակելի գետինս յարաբերելիս
արքայ եկեղեցւոյն Ուժի կոչեցելոյ յանուն Հայոց հո-
գևորական կալուածատեառն յինքն սեպհականեալ
գրաւեալ է, նոյնպէս զզիւղն պատկանեալ արքոյն թա-
գէոսի, որ ի ձեռն տիրապետութեան բարձրապատիւ
արքայաշնորհ Ալի խան Սամ Սամօլ մօլք կոչելոյ
գտանի 'ի կալուածոց ասելի. որովհետև գատարարու-
թիւն և լուսաբանութիւն այսպիսի գատից պատկանի
արդարաքննին վճռահատութեան Օրինականաց հոգե-
ւորական, վասնորոյ հրամայեմք, որ ձերդ գերազան-
ցութիւն իբրև տիրապէր յայսպիսի նիւթս առարկայից
զվերջին ձիրն աշխատութեան և ջանից 'ի գործ ե-
գեալ կատարումն ասյցես բարեպէս և ըստ իրաւանց
և արդարութեան տալ զվճիռն հրամանի վախճանա-
կան, յանձնելով միանգամայն զերկուս զինդիրս յի-
շատակեալս գատաստանին հոգևորականացն Ասուա-

Ծաբանից, որպէս և լցէ հրաման և վճիռ դատարանի լցի, վաւերացուսջի՛ք զայն և 'ի դատարան էօրինականաց անսի զրաւոր հրաման ելցէ, որ նովին եղանակաւ աւարտեսցի գործն, անշուշտ յայսմ մասին կատարեալ ջանացողութիւնս և ուշադրութիւնս արարեալ զերաւունս խղճի մտաց և իրաւանց արասջի՛ք և զանձն ձեր պարտաւորս կացուսջիք 'ի վերջաւորել։ Ցամենայնն Ռեջեպ 1282 թիւ, կամ 'ի նոյեմբերի 1865 ամի։

ԽՆԴԻՐ ՏԱՍՆԵՐՐՈՐԴ.

Տասներորդ՝ անշարժ կալուածք վարելահողք, պարտէզք և տունք պատկանեալք վանքին Թադէոսի սուրբ Առաքելոյն 'ի Խոյ քաղաքի, յատուկ և հատատուն իջարալանց դատին յայս քանի ամաց հետէ 'ի ձեռս խօյաբնակ պարսից, յետ քանիցս հարկադրանաց պահանջելոց 'ի նոցունց զտարեկան հատոյթս ըստ զօրութեան ձեռագրոց իւրեանց յայնոցիկ կալուածոց. անհնարին եղև բերել 'ի ձեռս և ոչ մի ինչ. թէպէտ և տեղական իշխանութիւնն ոչ զանց արար պահանջել, սակայն 'ի զերև ելին ամենայն ջանք նոցա։ Զի Սիսոանցի Աղաղուլի խանն զոլոշ մերձաւոր իջարատար անձանց, խոշընդոտան լինի և խրա-

տատու առ 'ի չվճարելոյ գհարկս իւրեանց, առ այս խնդրի զբարեհաճ անօրէնութիւն ձերդ Մեծանձնութեան :

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ·

'Ի դիմաց վեզիր Սպասալարի առ Սկեանդար խանն Խոյու· Արժանայարդ և գերազանցեալդ իմ: Որպէս նորին գերապայծառութիւն Գէորգ մեծ Եպիսկոպոս Քրիստոսական հայկազուն ազգի յայտնեաց մեզ՝ 'ի սրբոյ Թադէոսի Առաքելոյ վանէցն պատշաճեալ անշարժ կալուածոց օրինաւոր 'ի վարձու առեալ են թղթովք ի հոգևորական Առաջնորդաց Հայոց զանազան անձինք եղելոց 'ի Խոյ քաղաքի, դժուարանան հաստատանել զյանձն առեալ դումարս տարեկանի, այսու օրինակաւ անհաճոյ գտանի գործս, որ եթէ մի ոք 'ի յանհաւատից 'ի վարձու կալցի զկալուած ինչ հոգևորական կարգի և 'ի վճարել նորա, զոր պարտն է վճարել, դժուարացեալ ժամավաճառ լեալ երևին, ապա ուրեմն զուշադրութիւն զջանացողութիւնս աշխատութեամբ ձեր զոր արժան է 'ի գործ դիջի՛ք, և ըստ իրաւաքննութեան որ ինչ կարգաւ և անօրինութեամբ յայտարարացեն թուղթք պայմանադրութեան ինչարարամայք վարձակալացն կալուածոց վերահաստատութիւն տաջի՛ք և

զգրաման զուտարի բովանդակութեան կարուածոց նկե-
ղեցւոյն արքոյն Թադէոսի առաջի՛ք և յանձնեաջի՛ք
մեծ եպիսկոպոսին Հայկազանց. և թէ Հարկաւորեսցի
օրինականացն զատատման տեղական յանձն արասջի՛ք.
որ և եղէ վճիռ և փուրշիշ լինիցին, նոքին եղանա-
կաւ վարեսջի՛ք, զվերջին աշխատասիրութեան զճիգն
թափեսջի՛ք և զերաւոնս արդարարութեան եղբակա-
ցուսջի՛ք. զաւելին քան զայս չեք տեղի. յամենայն ոն-
ջեր 1282 ամի. կամ 'ի նոյեմբերի 1865 թիւ :

ԽՆԴԻՐ ՄԵՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ.

Մեսասանիերրորդ յայտ առնել մեծի Ամթոռոյ Ար-
քայական բարձրութեան ձերոյ. ո՛չ տարկանոն Հա-
մարիմ ըստ իմում տեսուչ անուանեալ պարտաւորու-
թեան, զի Խոյաբնակք ժողովրդականք Հայոց, ամի ամի
Հատուցանեն զՀարկ իմն անուանեալ զազան փուլի 'ի
տարին քառասուն թումանս տեղական դրամ, այլ թէ
որոնք իրաւամբ, ո՛չ ունեք չէ յայտնի, զի չեք Հայոցն
ո՛չ զազան և ո՛չ աշխատանք 'ի զազանէ անտի, զի ընդ
աղքատ դրութեանց իւրեանց կարացեն վճարել զայն
դրամաբ, որ ո՛չ անցանէ յօգուտ արքունի գանձարա-
նին, այլ միայն տեղական ժամանակաւոր իշխանք ըստ

քմաց և ախորժակաց վայելել զայն անիրաւացի պահանջ սեպհականեալ են ինքեանց իբրև օրէն և կանոն. առ այս աղաչեմ զմեծազօր տէրութիւն ձեր կարձել միանգամայն զզուր պահանջս նոցա։

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ.

Հրաման Սպասալարի բարեհաճութեամբ Արքային առ Սկեանդար խան Սարդարն Խոյու։

Գերազանցեալ Սիրելի՛դ իմ, որպէս ազդ եղև մեզ, կառավարիչք նահանգին Խոյու գումարն քառասուն թուման յանուն „զազան փուլի„ հարկս հարկանեն Հայոց բնակելոց 'ի նմին քաղաքի, և զայս դրամ ամի ամի իբրև հաստատեալ պահանջեն. որպէս յայտնի է, գումարդ այդ չէ հարկ ինչ վաւերացուցեալ օրինաւոր հարկի տէրութեան, այլ գուցէ թէ գլխաւոր կառավարիչք տեղւոյն վասն շահասիրութեան անձին այսպիսի բեռն ծանրութեան կայացուցեալ են 'ի վերայ Հայոց. դուք յայտ իրողութեան զարժանին քննութեան զպէտս ունիցի՛ք, եթէ գումարդ այդ չհամարի 'ի հաշիւ ցամարին գլխանի և կառավարիչք տեղական ինքնակամ հաստատեալ են զայն, հրամայեսցիք դադարեցուցանել զսովորութիւնդ այդ. որ այսուհետև մի՝ ամենեքին պահանջեսցեն զգումարդ այդ 'ի նոցանէ, որով ան-

գորը մնացեն, այլ եթէ սովորութիւնդ այդ հաստատեալ գտանի օրինապէս 'ի դիվանէ և գործադրութիւն անցելոյ ժամանակաց գտանի, ապա ուրեմն հրամայեսջի՛ք, որ առաւել քան զչափն կարգադրեալ չ'ծանրաբեռնեսցեն զնոսա, ապաքէն յայսմ մասին ջանս եղեալ ուշադի՛ր լերուք կատարելապէս. որով լեցի հաստատուն վաւերացուցիչ գործոյ. առաւել քան զայս չկք ինչ 'ի ծանօթութիւն. գրեցաւ յամսեանն Ռեջէպ 1282 ամի կամ ի Նոյեմբերի, 1865 թիւ։

ԽՆԴԻՐ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

Երկոտասաներորդ՝ ամենախոնարհաբար յայտ առնեմ ձերդ Արքայական բարձրութեան, նաև յաղագս սակաւաթիւ բնակչաց Հայոց, որք բնակակից են բազմութեան գերդաստանաց մուսուլմանից. սոքա մեծամեծ դժուարութիւնս կրեն յանբարի և խառն ընթացից դրացեացն իւրեանց. և վասն հարկատուութեան կալուածատերացն ոչ սակաւ վնաս և հալածանս վայելեն 'ի նոցունց. թէ կարևոր լեցի միանգամայն ապահովել և զվնաս այնօրինակ սակաւաթիւ գերդաստանաց Հայոց կամ հանել 'ի գեղջէն և միաւորեալ յայլ տեղիս գումարեալ և կամ Արքունի հրա-

մանաւ սատակել կառավարչացն, զի մի՛ զեր քան զչափն վշտահար արասցեն զնոսա։

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ.

Հրաման Սպասալարի ըստ բարձրագոյն հաճութեան Արքայի առ Ազիզ խան Սարդարն։

Պատուարժան և Մեծարժէք իմ. որպէս յայտնաբարութիւնք եղեն մեծաւորացն Տէրութեան մեծի, բազմութիւնք ցիր և ցան եղեալ Հայկազանց Արամեան դրօհի բնակին 'ի զանազան գիւղորայս Ատրպատական երկրի. 'ի կողմանէ կառավարչաց և առաջնորդացն գիւղանի և գիւղատեարց և կալուածատեարց անիրաւութիւն և զրկանք մեծամեծ ծանրանան 'ի վերայ նոցա. այսու ամենայնիւ թշուառութիւն և նեղութիւնք չարաչար բերեն վիճակի և կեցութեան նոցա. վասնորոյ պատուէր հրամանի բարձրագոյն Օգստուտիտ արքայի մեծի լինի ձերումդ գերազանցութեան, որ 'ի մասին պաշտպանութեան և հովանաւորութեան այնոցիկ քանի մի գերդաստանաց Հայոց ցրուելոց յԱտրպատականի, որոց հարկ և օրէն դատիցէք, հրամայեսջի՛ք անխնայ, որ ըստ կարգի և կարգադրութեան Տոմարագրելոյ՝ 'ի մասին ժողովրդապահու-

թեան վարել ընդ նոսա, և թողուլ զժողովուրդն յանդորը և խաղաղ վիճակի և բարեբաստութեան և առաքելական պահանջ և բռնութիւնք չլինիցին նոցա, և զամենայն ժողովուրդս միանման անզանազան և հաւասար ճանաչել. թէ կառավարիչք դիվանի և թէ կալուածատերք առաւել քան զչափն կարդադրեալ և հաստատեալ հարկի չպահանջեսցեն 'ի նոցանէ և զոչինչ և ամենևին բռնութիւնք և հարստահարութիւնք չգործեսցեն նոցա, և յամենայնի բարերջանիկս առնել զնոսա, որով կարողացին խաղաղութեամբ և անդորրութեամբ պարապիլ երկրագործութեամբ և մշակութեամբ իւրեանց. անշուշտ ձերդ Գերազանցութիւն, յայսմ իրողութիւնս ձերդ բարեմասնութիւնք առատացին և պարտուպատշաճ հարկաւորութիւնք անհրաժեշտս 'ի գործ դիցին. որով լինիցին առիթ անդորրութեան և պատճառ հանգստութեանն նոցա, պատրաստեսցին 'ի ձէնջ անդուլ հոգունակութիւն. զի միշտ հանապազ յուսալի ողորմածութեամբ և անփոյթ խաղաղութեամբ վարեսցեն զկեանս իւրեանց։ Պատուելի՛դ իմ, հարցանեմ ձեզ և վասն հարկահանութեան. ըստ օրինի հաստատեալ դիվանի անցեալ ամի ո՞րչափ է, նոյն գումակ հրամայեսջի՛ք և նովին

կարգադրութեամբ լինելոյ ստացուածն Հարկաց. արտաքոյ կարգի չվարեսցին բնաւ, վասն զի կամք և հրաման տէրութեանն է և ոչ կամք կալուածատերաց, որ չկարծեմ ընդդէմ օրինի և բարեկարգութեան հետևիցեն, վերջապէս ոչ ունիք 'ի հայոց չլինելոյ հարստահարութիւն, անիրաւութիւն և զրկանք, առաւելքան զայս չեք ինչ 'ի յաւելուլ. յամենայնն Ռեջեպ 1282 թիւ, կամ 'ի նոյեմբերի 1865 ամի.

ԽՆԴԻՐ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

Թոյլատուութիւն լեցի հայոց Ատրպատականի 'ի քաղաքս և 'ի գիւղօրայս 'ի ժամ աղօթից հնչեցուցանել զզանգակս կամ զկոչնակ՝ որպէս առ այս գոյ թոյլտուութիւն 'ի Սպահան քաղաքի 'ի մեծէն Շահապասայ՝ որպէս այժմ և 'ի լատին եկեղեցիս Սալմասու :

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ-

Առ այս ըստ խորհրդոց վեզիր դվալի Խարիջին, առժամանակ մի բարուք համարեցաւ թողուլ առանց կրկին արծարծելոյ մինչև ցայլ տնօրէնութիւն Նորին Արքայական մեծութեան :

ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԽՆԴԻՐ.

Առանձին նամակ առ Միրզայ Սայիդ-խան դվալի խարիջ, այն է արտաքին դորձոց Մինիստր՝ զի միջնորդեսցէ առ Աստուածազօր արեգակնափայլ Արքայն ի մասին ընդհանուր հրովարտակի յանուն ամենայն հայոց ատրպատականի քաղաքաբնակաց և գիւղականաց 'ի կողմանս Սալմաստու, Որմիոյ, Խոյու և Ղարադաղու՝ որպէս զի ծանիցեն ամենեքեան զԱրքային մեծամեծար շնորհ և ողորմութիւն և ինքեանք հաւատարիմ յուսով իւրեանց աղօթաւոր դոցին վասն հաստատութեան և երկարութեան կենաց:

ՆՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ.

Արքունի կնքով հրովարտակ.

Հրովարտակ վասն ընդհանուր հայոց Ատրպատականի, որով միանգամայն յուսադրեալ լիցին ամենայն ազգ Քրիստոնէից հպատակելոցն մերում Արքայական Աթոռոյ 'ի Սահմանս Ատրպատականի, որպէս մեր են հաճութիւն և բարձրագոյն կամք, ամենեքին հաւատարիմ և հաստատուն յուսով մնացին, և որպէս խնդրանէ նախնիք մեր և մեծաւորք Աշխարհիս պարսկաստանի բարեյօժար կամօք դիտաւորեալ են պահել

'ի ներքոյ ամենաբարձ հովանաւորութեան և արքայա-
կան զաւական անդորր և առատարար շնորհաց, զե-
բաղանց քան զամենեսին մեր են հանդերձ անօրէնու-
թիւն վասն անդորր ազատութեան զկեցութիւն և զմի-
ձնակ խաղաղութեան առաւելս և ոչ նուազ ինչ ու-
նել, և որպէս մեր արքայական քաղցր ակնարկութիւն
ի վերայ քրիստոնէից պանծացեալ առանի և ի առա-
ւելս այնպէս և ամենայն մեծաւորաց և իշխանաց
հարկապիր և ստիպող զաւանիմք զամենեսին երջանիկ
և անվրդով պահպանել յամենայն զէպս, ոչ ինչ իւիք
պակաս համարել քան զհպատակեալս մերում ազգու-
թեան խաղաղութեան Արքայական կրօնի, անբաժան և ան-
զանազան վարկեալ զամենեսին միանգամայն, անաւարա-
ձայն առաջի աչաց ունիցին, որպէս հաճոյ են մերում
Արքայական հովանաւորութեան և կամաց. զրեցաւ
յամենանն Ռեջեպ:

ԽՆԴԻՐ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

Շնորհ մեծ եղեցի մեծապօր Արքայիդ և արեւուն
պայծառութեամբ փայլեցի 'ի վերայ հպատակելոց զե-
ղբոյ Մեծութեան, թէ Ռաջանն շնորհեցեալ 'ի Աբբաս
Միրզայ Նայիպ Սալթանայէ Նորոզեցի յաստուկ և ա-
ռանձին Արքայականիք հրովարտակաւ 'ի գիտաւորու-

թեհրան որպէս և խնդրագործ եղեն մեր Արքայական տերութեան գլխաւորն 'ի Հոգևորականաց Հայոց, և յօրէցամանէ հրամարակեալ լեցի 'ի տէրութեան մեր ում և 'ի դիւանս, զի Հայք 'ի թեհրան արքայանիստ քաղաքիս և 'ի թաւրէզ ոչինչ կերպիւ և ոչինչ պատճառաւ մի' ենթարկեսցին 'ի ներքոյ ծանր կամ թեթև հարկաց, որք ոչ են հաճոյ մեր կամաց և իշխանաց տէրութեան. զրեցաւ յամսեանն Ռեջեպ:

ԽՆԴԻՐ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

Եթէ երկու Հայք 'ի միասին ունիցին վէճ, և գործն այն պատկանի դատաստանի և վճռոյ, մի' լեցի թոյլատուութիւն այնոցիկ անձանց դիմել 'ի շարեաթն մուսուլմանից, այլ վերաբերեսցի Հոգևոր Առաջնորդացն Հայոց Ատրպատականի ըստ կանոնի Եկեղեցական կամ արտաքին Հայկական ընիկ սովորութեան ըստ տեղական հանգամանաց:

ԽՆԴԻՐ ԵՕԹՆՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

Նոյնպէս ըստ մեր ընիկ և նախնական սովորութեան չունիցին իրաւունս Հոգևոր գլխաւորքն շարիաթիցն վճռել որպիսի և իցէ անժառանգ ննջեցելոցն Հայոց ըստ իւրեանց ախտրժակացն և խոչընդոտան լինին Հակառակ մեր կանոնի Եկեղեցական, որ կայքն անժա-

ռանգայն անշուշտ պատկանի եկեղեցեաց կամ վանո-
ւէից այնր վիճակի, յորմէ մասին խնդրի՝ ի դրանէ Ար-
քային վախճանական վճիռ և հրաման՝ ի վերայ գլխա-
ւորացն Շարեաթի բնաւին չներգործել ինչ՝ ի վերայ
այսպիսեաց:

Ա.ռ 16 և 17 երրորդ ինդրատրդրծութիւն
տեսուին չէ ընկալեալ լուծումն յԱ.ղբայրա-
կան դիւանէն, որ հրաման և հաճութիւն Ա.ր-
քային արդէն յայտնեցեալ է մեզ, այլ յաղագս
բացակայութեան Ա.ղբային ճնայ դեռ անու-
սուցում:

ՀՀ Ազգային գրադարան
NL0340996